Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով 11.08.2020թ. կայացված ԱՖ445258 և ԱՖ445259 որոշումներն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<23>> 09 2020թ. 7-13 - 11774 ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Աղաբեկ Շուքուրյանի ՄԴ/129616-20 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Գեղարքունիքի մարզի Արծվանիստ գյուղի 10 փողոցի 3 նրբանցքի 2 տան բնակիչ Աղաբեկ Շուքուրյանը դիմումով խնդրել է բեկանել Ճանապարհային ոստիկանության վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով 11.08.2020թ. կայացված ԱՖ445258 և ԱՖ445259 որոշումները՝ նշելով, որ համաձայն չէ կայացված որոշումների հետ: Միաժամանակ հեռախոսակապի միջոցով համաձայնվել է, որ դիմումը քննարկվի առանց իր մասնակցության:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով 11.08.2020թ. կայացված ԱՖ445258 և ԱՖ445259 որոշումները ենթակա են կատարման հետևյալ պատճառաբանությամբ:

<<Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին>> ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասի <<բ>> կետի համաձայն՝ մեխանիկական տրանսպորտային միջոցի վարորդը պարտավոր է կառուցվածքով նախատեսված անվտանգության գոտիներով կահավորված տրանսպորտային միջոցներով երթևեկելիս լինել ամրակապված և չփոխադրել անվտանգության գոտիներով չամրակապված ուղևորներ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123.3-րդ հոդվածի համաձայն՝ տրանսպորտային միջոցների անվտանգության գոտիները չամրակապած կամ սաղավարտը չկոճկած վիճակում կամ առանց սաղավարտի տրանսպորտային միջոցները վարելը, ինչպես նաև անվտանգության գոտիները չամրակապած կամ սաղավարտը չկոճկած կամ առանց սաղավարտի ուղևոր փոխադրելը առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ 11.08.2020թ. ժամը 15:25-ի սահմաններում Երևան-Սևան ավտոճանապարհին դիմումատուի կողմից վարած <<MERCEDES>> մակնիշի 75DD555 հաշվառման համարանիշի ավտոմոբիլը կանգնեցվել է Ճանապարհային ոստիկանության ՃՊԾ 2-րդ սպայական գումարտակի 3-րդ սպայական վաշտի 1-ին սպայական դասակի ավագ տեսուչ, ոստիկանության մայոր Ռ.Գրիգորյանի և նույն դասակի տեսուչ, ոստիկանության կապիտան Ա.Մկրտչյանի կողմից՝ <<Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին>> օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասի <<բ>> կետի պահանջի խախտման համար, այն է՝ վարորդն ավտոմոբիլը վարել է անվտանգության գոտիով չամրակապված վիճակում և փոխադրել է անվտանգության գոտիով չամրակապված ուղևոր: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123.3-րդ հոդվածով կայացվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով ԱՖ445258 և ԱՖ445259 որոշումները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝ մեկ անձի կողմից երկու կամ ավելի վարչական իրավախախտումներ կատարելու դեպքում վարչական տույժը նշանակվում է յուրաքանչյուր իրավախախտման համար առանձին-առանձին:

47

Ճանապարհային ոստիկանության ծառայողների կողմից տրված պարզաբանման համաձայն՝ քաղաքացի Աղաբեկ Շուքուրյանի կողմից կատարված իրավախախտումները հիմնավորող՝ տեխնիկական միջոցների կիրառմամբ ձեռք բերված ապացույցներ առկա չեն, սակայն իրավախախտումներն եղել են անմիջապես իրենց տեսադաշտում, ակնհայտ և պարզ տեսանելի, որոնց կապակցությամբ կազմվել են համապատասխան արձանագրություններ և կայացվել ԱՖ445258 և ԱՖ445259 որոշումները: Միաժամանակ ոստիկանության ծառայողները հայտնել են, որ իրենց և վարորդի միջև ծառայողական բնույթի խոսակցություններից բացի այլ խոսակցություններ չեն եղել:

<<Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին>> օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի <<ա>> կետի համաձայն՝ Ճանապարհային ոստիկանության ծառայողը պարտավոր է տրանսպորտային միջոցը կանգնեցնել, եթե **ակնհայտ** կամ տեխնիկական միջոցների օգտագործմամբ **երևում է, որ վարորդը խախտել է ճանապարհային երթևեկության կանոնների պահանջները:** Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ երթևեկության սահմանված արագության գերազանցման և տրանսպորտային միջոցների ապակիների լուսաթափանցելիության սահմանված չափի խախտումների համար պատասխանատվություն է առաջանում, երբ տվյալ խախտումը փաստարկված է համապատասխան տեխնիկական միջոցների կիրառմամբ:

Այսպիսով, դիմումատուի արարքում առկա են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123.3-րդ հոդվածի հատկանիշները, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Ճանապարհային ոստիկանության վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով 11.08.2020թ. կայացված ԱՖ445258 և ԱՖ445259 որոշումները թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Աղաբեկ Շուքուրյանին և Ճանապարհային ոստիկանության ՃՊԾ 2-րդ սպայական գումարտակ:

Է.Կարապետյան

Կատարող՝ Ռ.Ավետիսյան
Հեռ. 060838402